MA-SIS

ՄԱ-ՍԻՍ

Gazette des Arméniens de Lille, n° 4, Septembre 2008

LA FÊTE DE L'ALPHABET ET LE CONCERT

Le soir du 26 juin, les professeurs des cours d'arménien ont souhaité organiser avec les enfants une petite fête de fin d'année dans le même esprit que les fêtes de l'alphabet qui clôturent l'année scolaire en Arménie. Il s'agissait aussi de montrer aux parents les progrès des enfants.

Siranouche a confectionné une partie des décors avec les enfants, et l'autre en famille. Elle a également peint avec Samvel les tee-shirts aux couleurs de l'Arménie.

Les élèves préparent les décors pour la Fête de l'alphabet
Աշակերտները՝ այբուբենի տոնի համար դեկորացիաներ պատրաստելիս

La soirée a commencé avec les traditionnels discours de bienvenue et de remerciements à la Ville de Lille et au Centre social pour l'aide qu'ils nous ont apporté. Madame Latifa Kechemir, adjointe à Madame le Maire de Lille et Présidente du Conseil de quartier du Faubourg de Béthune, a tenu à saluer les efforts de notre communauté pour préserver sa culture et tout particulièrement l'apprentissage de la langue. Elle a souligné que pour elle, mieux une personne connaissait sa culture d'origine, mieux elle parvenait à s'intégrer dans une autre et tout particulièrement dans la culture française.

Puis nos quinze enfants, du plus grand au plus petit, se sont lancés dans la récitation de l'alphabet illustré de maximes. Les danseurs leur ont succédé en présentant leur nouvelle danse.

Les tee-shirts sous le pinceau « tricolore » de Samvel
Կիսաթև շապիկները՝ Սամվելի « եռագույն » վրձնի ներքո

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ՏՈՆ ԵՎ ՀԱՄԵՐԳ

Հունիսի 26-ի երեկոյան հայոց լեզվի դասընթացների ուսուցիչները ցանկություն էին հայտնել երեխաների հետ կազմակերպել երեկույթ՝ վերջին զանգի առթիվ: Այս միջոցառումը պետք է հիշեցներ այբուբենի տոնը, որը Հայաստանում սովորաբար եզրափակում է ուսումնական տարին: Պետք էր նաև ծնողներին ցույց տալ, թե երեխաներն ինչ առաջընթաց են ունեցել:

Դեկորացիաների մի մասը Սիրանուշը պատրաստել էր երեխաների հետ, իսկ մյուսը՝ իր ընտանիքի անդամների օգնությամբ: Սամվելի անմիջական մասնակցությամբ կիսաթև շապիկներն ստացել էին հայկական եռագույնի երանգներ:

Երեկոն սկսվեց արդեն ավանդական դարձած շնորհակալական ուղերձով՝ ուղղված Լիլի քաղաքապետարանին և Մշակույթի տանը՝ ցուցաբերած օգնության համար: Լիլի քաղաքագլխի տեղակալ և Ֆոբուր դը Բեթյունի թաղային խորհրդի նախագահ տիկին Լաթիֆա Քեշմիրը ողջունեց մեր համայնքի գործադրած ջանքերը՝ հայկական մշակույթի և, մասնավորապես, հայոց լեզվի պահպանման հարցերում: Նա նշեց, թե մարդ որքան լավ իմանա իր ազգային մշակույթը, այնքան նրան հեշտությամբ կհաջողվի ինտեգրվել այլ մշակույթին, տվյալ դեպքում՝ ֆրանսիականին:

Այնուհետև մեր 15 երեխաները՝ մեծից՝ փոքր, արտասանեցին ոտանավորներ՝ նվիրված հայոց այբուբենին: Նրանց ելույթը շարունակեցին պարի խմբի սաները, որոնք ներկայացրեցին իրենց նոր պարը:

Այնուհետև փոքրիկները կրկին բարձրացան բեմ, որ ներկայացնեն «Կիկոսի մահը» բեմադրությունը, երգեն «Այբ, բեն, գիմ»-ը և «Կարմիր, կապույտ, ծիրանագույն»-ը՝ նվիրված հայկական դրոշի գույներին: Երեխաների ելույթները եզրափակեցին պարի խմբի պատանիներն ու աղջիկները:

Զուգահեռաբար, տիկին Գալստյանը, ով մարտ ամսից սկսած պարի դասեր է տալիս մեր պատանիներին ու աղջիկներին, մեզ առաջարկել էր հանձն առնել «Հայկական ֆոլկ հնգյակ»

Les enfants de l'école arménienne lors de la fête de l'alphabet
Հայկական դպրոցի սաները՝ այբուբենի հանդեսի ժամանակ

Les enfants sont ensuite revenus pour interpréter le conte *La mort de Kikos* et les chansons *Ayb Ben Gim* et *Rouge, Bleu, Orange*, les couleurs du drapeau de l'Arménie. Les jeunes danseurs les ont alors rejoints dans ce final.

Parallèlement, Madame Galstian qui donne des cours de danse depuis le mois de mars aux jeunes, nous a proposé de recevoir un groupe musical venu tout droit d'Arménie pour son mariage : l'*Arménian folk quintet*.

Scène du spctacle *La mort de Kikos*
Հատված՝ «Կիկոսի մահը» բեմադրությունից

Nous avons ainsi regroupé les deux évènements pour passer une agréable soirée. Alexandre Harutunyan, Gevorg Manukyan, Ruben Aslanyan, Ashot Yegoryan et Vartkes Hovhannisyan nous ont interprété un répertoire issu des œuvres des grands compositeurs de la musique traditionnelle arménienne (Sayat-Nova, Komitas, Khatchatour Avetissian) mais également bien d'autres répertoires.

Dans le public, certains musiciens français ont pu découvrir les sonorités typiques d'instruments arméniens comme le *doudouk* et le *dehol*. Le public a beaucoup apprécié la chaleur de cette musique qui de temps en temps rappelait le fameux « rabis » brillamment jouée par les cinq musiciens. Certains spectateurs ont partagé leur enthousiasme en dansant.

Louisette Lamarche

LA FÊTE DU JEU

C'est avec étonnement que certaines mamans, venues accompagner leurs enfants au cours d'arménien, ont découvert la Fête du jeu. Ce 31 mai après-midi, en effet, comme dans beaucoup d'autres endroits en France, le Centre social du Faubourg de Béthune s'était transformé en gigantesque espace de jeu. Toutes les salles étaient occupées avec des modules de gymnastique pour les tout petits dans la salle de judo, des jeux pour les enfants au sous-sol, des jeux flamands anciens et d'autres pays proposés par l'association Wellouëj dans la cour, et des jeux de société dans la grande salle : jeux d'équilibre, de cartes, d'échecs, de dames et, avec notre association *Ararat*, de *nardis* (backgammon).

Il y en avait pour tous les goûts et tous les âges, le but étant de partager ces moments simples de bonne humeur en famille.

Une quinzaine de membres de notre communauté ont profité de cet après-midi entièrement gratuit et fort fréquenté. Espérons que l'année prochaine nous serons plus nombreux et que peut être nous pourrons préparer un vrai concours de *nardis* avec les papas qui nous ont manqué ce jour-là.

Juste après la fête, en début de soirée, un gala de boxe a eu lieu sur la place face au Centre social, à côté du centre commercial.

Louisette Lamarche

երաժշտական համույթի համերգի կազմակերպումը: Խումբը հատուկ Ֆրանսիա էր ժամանել Հայաստանից՝ իր հարսանեկան արարողության առթիվ նվագելու համար:

Ահա այսպիսով մենք համատեղել էինք այս երկու իրադարձությունները, որպեսզի հաճելի երեկո անցկացնենք: Ալեքսանդր Հարությունյանը, Գևորգ Մանուկյանը, Ռուբեն Ասլանյանը, Աշոտ Եգորյանը և Վարդգես Հովհաննիսյանը մեր ուշադրությանը ներկայացրին ընտրանի՝ կազմված ինչպես հայկական ազգային երաժշտության մեծ երգահանների (Սայաթ-Նովա, Կոմիտաս, Խաչատուր Ավետիսյան), այնպես էլ այլոց ստեղծագործություններից:

Համերգին ներկա մի քանի ֆրանսիացի երաժիշտներ հնարավորություն ունեցան ունկնդրելու հայկական ազգային դուդուկի ելևէջները և դհոլի ռիթմը: Հանդիսատեսները շատ բարձր գնահա-տեցին հնչվող երաժշտության ջերմությունը: Հինգ երաժիշտները կատարում էին փայլուն ձևով: Նրանց երաժշտությունը երբեմն հիշեցնում էր հայտնի «ռաբիս»-ը: Հանդիսատեսների մի մասը աշխույժ պարերով արտահայտեց իր խանդավառությունը:

Լուիզեթ Լամարշ

L'*Arménian folk* quintet «Հայկական ֆոլկ» հնգյակը

ԽԱՂԵՐԻ ՏՈՆԸ

Մայրերից շատերի համար, որոնք սովորաբար ուղեկցում են իրենց երեխաներին հայոց լեզվի դասընթացների, Խաղերի տոնին ներկա լինելը դարձավ անակնկալ: Մայիսի 31-ին օրվա երկրորդ կեսին, ինչպես Ֆրանսիայի այլ վայրերում, Ֆոբուր դը Բեթյունի Մշակույթի տունը վերափոխվել էր մի հսկայական խաղահրապարակի: Բոլոր դահլիճները վերածվել էին ո՛րը մարմնամարզական մոդուլի ամենափոքրիկների համար՝ ձյուդոյի սրահում, ո՛րը մանկական խաղասրահի՝ նկուղային հարկում, ո՛րն էլ հին ֆլամանդական և այլ երկրների խաղերի՝ Մշակույթի տան բակում, որի պատասխանատուն էր «Վելլուեժ» միությունը: Մեծ դահլիճը տրամադրված էր սեղանի խաղերին՝ ձեռքի ուժ, խաղաքարտեր, ճատրակ, տամա: «Արարատ» միությունը ներկայացնում էր նարդին:

Բոլոր տարիքի և ճաշակի համար կային խաղեր: Հետապնդվող նպատակն էր՝ ընտանիքներով և լավ տրամադրությամբ մասնակցել այս պարզ միջոցառմանը:

Մեր միության անդամներից 15-ը առավելագույնս օգտըվեցին օրվա երկրորդ կեսին կազմակերպված անվճար և մարդաշատ այս միջոցառումից: Հույս հայտնենք, որ գալիք տարում մենք ավելի շատ կլինենք և, ո՞վ գիտի, միգուցե կարողանանք կազմակերպել նարդու իսկական մրցույթ տղամարդկանց միջև, որոնց թիվը շատ քիչ էր այդ օրը:

Միջոցառումից անմիջապես հետո՝ երեկոյան, Մշակույթի տան հարևանությամբ գտնվող առևտրի կենտրոնի հրապարակում տեղի ունեցան նաև բռնցքամարտի ցուցադրական ելույթներ:

Լուիզեթ Լամարշ

REPAS CONVIVIAL ARMÉNIEN

Le 20 juin 2008, un repas convivial arménien a eu lieu à la Maison de quartier de la rue Vincent de Paul de Mons en Barœul avec l'association *Caramel* et quelques dames de notre association. Dans le cadre d'un atelier cuisine hebdomadaire, cette association propose mensuellement un repas de cuisine étrangère.

De nombreux pays ont déjà été mis à l'honneur et ce jour de juin c'était le tour de l'Arménie. Une quarantaine de personnes, dont Monsieur l'adjoint à la culture de cette ville, ont pu déguster une salade traditionnelle, le boulghour au poulet à la sauce tomate et la patisserie nationale arménienne. Siranouche et Gohar ont piloté cette opération avec l'association *Caramel*. L'initiative a été appréciée et la possibilité de monter une nouvelle rencontre autour peut être d'un spec-tacle à été évoquée. À suivre ….

Louisette Lamarche

LE REPAS DE QUARTIER

Deux jours après notre fête de fin d'année, le 28 juin, le Centre social du Faubourg de Béthune organisait un repas de quartier ouvert à tous et animé par les associations du secteur.

Le groupe de danse arménien est de nouveau sur la scène
Հայկական պարի խումբը կրկին բեմի վրա է

Cela s'est déroulé dans la cour de l'école Verhaeren, à coté de l'école de musique. Après le repas composé notamment d'un barbecue, différentes associations sont intervenues pour dire des textes solidaires et surtout présenter des danses : hip-hop, danses indienne, orientale, flamande et, bien évidemment, arménienne. Quelques uns d'entre nous avec leurs familles ont pu profiter de ce spectacle sous un beau soleil.

Louisette Lamarche

La table « arménienne » du repas
Ճաշկերույթի «հայկական» սեղանը

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑԻ ՀԱՄՏԵՍՈՒՄ՝ ՄՏԵՐՄԻԿ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

2008 թ. հունիսի 20-ին Մոնս ան Բարոլի Վենսան դը Պոլ փողոցի վրա գտնվող Համայնական Տանը մատուցվեց հայկական ճաշ՝ «Կարամել» միության և մեր համայնքի մի քանի տիկնանց կողմից: Շաբաթօրյա խոհանոցի խմբակի շրջանակներում այս միությունն ամեն ամիսը մեկ առաջարկում է ճաշկերույթներ՝ նվիրված օտարերկրյա խոհանոցներից որևէ մեկին:

Les sœurs Babikian, Siranouche et Louciné, lors de la préparation du repas arménien
Բաբիկյան քույրերը՝ Սիրանուշը և Լուսինեն, հայկական կերակուր պատրաստելիս

Այդ պատվին արդեն արժանացել էին շատ երկրներ և այդ օրը Հայաստանի հերթն էր: Մոտ քառասուն հոգի, որոնց թվում նաև մշակույթի գծով քաղաքագլխի տեղակալը, հնարավորություն ունեցան համտեսելու ավանդական աղցան, բլղուրով փլավ՝ հավի մսով և տոմատի թանձրուկով, հայկական ազգային քաղցրավենիք: Միջոցառման կազմակերպիչներն էին «Կարամել» միությունը՝ Սիրանուշի և Գոհարի հետ միասին: Այս նախաձեռնությունը շատ բարձր գնահատվեց: Խոսք գնաց նաև հնարավոր մեկ այլ հանդիպման կազմակերպման մասին, ինչու՞ չէ մյուս անգամ որևէ համերգ ներկայացնելով: Ուրեմն սպասենք նոր հանդիպման:

Լուիզեթ Լամարշ

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ

Վերջին զանգին նվիրված միջոցառումից երկու օր հետո Ֆոբուր դը Բեթյունի Մշակույթի տունը կազմակերպել էր ճաշկերույթ, որի մուտքն ազատ էր բոլորի համար:

Un groupe d'Arméniens après le repas
Հայերի մի խումբ ճաշկերույթից հետո

Միջոցառման անցկացումը տեղի էր ունենում թաղամասում գրանցված միությունների միասնական ուժերով: Այն ընթանում էր Վերհարենի անվան դպրոցի բակում՝ երաժշտական դպրոցի հարևանությամբ: Ճաշից հետո, որը բաղկացած էր, մասնավորապես, խորովածից, ներկա տարբեր միությունները ելույթ ունեցան համերաշխության թեմայի շուրջ և ներկայացրեցին բազմաթիվ պարեր՝ հիփ-հոփ, հնդկական, արևելյան, ֆլամանդական և, իհարկե, հայկական: Արևոտ երկնքի ներքո մեր միության շատ անդամներ իրենց ընտանիքներով ներկա եղան այս միջոցառմանը:

Լուիզեթ Լամարշ

LE DIFFICILE CHEMINEMENT DE LA DÉMOCRATIE…

En vacance en Arménie en avril dernier, nous avons pu constater la tension politique du pays après les évènements des mois de février et mars qui se sont soldés par le décès de 10 personnes. L'interdiction de manifester était contournée par une « promenade politique » hebdomadaire avenue du Nord, en face de l'Opéra, où campaient les forces de police et les militaires. De nombreuses personnes nous ont exprimé leur insatisfaction électorale. Certains ont témoigné de fraudes auxquelles elles ont assisté autour des bureaux de vote.

Nous avons participé à la manifestation du 9 avril non autorisée en hommage aux personnes décédées 40 jours plus tôt lors des affrontements avec les forces de l'ordre. Entre l'hôtel de ville, la statue de Miasnikian et le parc de loisirs voisin, des milliers de personnes étaient présentes et la tension était extrême. Les forces militaires de première ligne, composées de jeunes appelés, écoutaient, à la fois amusées et inquiètes, les interpellations de mères de famille et de grand-mères leurs demandant de rentrer chez eux et de les laisser passer. Les coups de klaxon de la circulation non interrompue accompagnaient les cris et les slogans politiques des manifestants : « Liberté », « Lévon – président », « Serjik, va t'en ». Pratiquement en même temps, le nouveau président contesté par la majorité des Arméniens fêtait son intronisation dans les rues désertes bouclées par la police et devant une assemblée peu nombreuse parmi laquelle aucun autre premier chef d'état n'a trouvé convenable de se montrer. Le spectacle prévu le soir place de la République a été perturbé par des manifestants et probablement écourté.

Erevan, le 9 avril, 40^{e} jour des victimes du 1^{er} mars. Le deuil interdit…
Երևան, 9 ապրիլի, մարտի 1-ի զոհերի 40 օրը: Արգելված սուգ...

C'est dans ce contexte que nous avons rencontré Monsieur Patvakan Hovakimyan, responsable du service de protection juridique de Levon Ter-Petrossian, principal opposant politique au nouveau président. Patvakan Hovakimyan est diplômé de la Faculté de droit de l'Université d'État d'Erevan, spécialisation Droit pénal. Il a travaillé au Tribunal du Transport en tant qu'auxiliaire du procureur, ensuite à la

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ...

Անցյալ տարի ապրիլին՝ արձակուրդների ժամանակ գտնվելով Հայաստանում, մենք ականատես եղանք երկրում տիրող քաղաքական լարվածությանը, որն առաջացել էր փետրվար և մարտ ամիսների իրադարձություններից հետո և որի հետևանքով զոհվել էին 10 մարդ: Հանրահավաքների արգելումը հանգեցրել էր նրան, որ Օպերայի դիմաց՝ Հյուսիսային պողոտայում տեղի էին ունենում ամենօրյա «քաղաքական զբոսանքներ»՝ զինվորական և ոստիկանական ուժերի մշտական հսկողության տակ: Բազմաթիվ մարդիկ իրենց դժգոհությունն էին հայտնում ընտրությունների վերաբերյալ: Շատերը վկայում էին ընտրատեղամասերում իրենց աչքի առջև տեղի ունեցած խախտումները:

Erevan, le 9 avril, 40^{e} jour des victimes du 1^{er} mars. Près de la statue de Miasnikian.
Երևան, 9 ապրիլի, մարտի 1-ի զոհերի 40 օրը: Մյասնիկյանի արձանի մոտ:

Ապրիլի 9-ին մենք մասնակցեցինք իշխանական ուժերի հետ բախման հետևանքով զոհվածների մահվան 40 օրվան նվիրված սգո չարտոնված հանրահավաքին: Քաղաքապետարանի, Մյասնիկյանի արձանի և հարևան զբոսայգու շրջակայքում ներկա հազարավոր մարդիկ գտնվում էին գերլարված վիճակում: Իշխանական պատնեշի առաջին գծում երիտասարդ զինվորականներն էին, ովքեր զվարճությամբ, բայց միևնույն ժամանակ և անհանգստությամբ, լսում էին մայրերի և տարեց կանանց կոչերը, որոնք նրանցից պահանջում էին վերադառնալ տուն և բացել ճանապարհը: Ավտոմեքենաների չդադարող ձայնային ազդանշաններին հետևում էին ցուցարարների քաղաքական վանկարկումները՝ «Ազատությու՛ն», «Լևո՛ն՝ նախագա՛հ», «Սերժի՛կ հեռացի՛ր»: Այդ ժամանակ հայաստանցիների մեծամասնության կողմից չճանաչված նորընտիր նախագահը երդման արարողությունն էր տոնում՝ ոստիկանության կողմից շրջափակված դատարկ փողոցներում և հրավիրված սակավաթիվ անձանց առջև, որոնց շարքում ներկա գտնվելը ոչ մի այլ երկրի առաջին ղեկավար հարկ չէր համարել: Երեկոյան Հանրապետության հրապարակում նախատեսված համերգը ցուցարարների կողմից խաթարվեց և հավանաբար կրճատվեց:

Այս ամենի առնչությամբ մենք հանդիպեցինք ներկայիս նախագահի հիմնական մրցակից Լևոն Տեր-Պետրոսյանի իրավաբանական պաշտպանության ծառայության ղեկավար պ. Պատվական Հովակիմյանի հետ: Պ. Հովակիմյանն ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը (քրեական իրավունք): Աշխատել է տրանսպորտի դատախազությունում՝ որպես դատախազի օգնական, այնուհետև կենտրո-

Commission électorale centrale en qualité de juriste. Actuellement, il travaille dans le bureau de Levon Ter-Pétrossian où il dirige le service juridique.

Lors de notre rencontre, nous avons croisé deux personnes venues se plaindre. L'une portait plainte de ne pouvoir récupérer sa voiture en fourrière depuis 45 jours parce qu'elle était garée près de la place de l'Opéra pendant les fameux évènements. L'autre, une dame âgée, avait été battue par un policier dans la rue alors qu'elle tentait de s'interposer à une arrestation.

Erevan, le 19 avril 2008. Ancien parc Kirov. Premier rassemblement autorisé de l'opposition après les évènements du 1er mars.
Երևան, 19-ը ապրիլի, նախկին Կիրովի անվ. այգի: Մարտի 1-ի իրադարձություններից հետո ընդդիմության առաջին արտոնված հանրահավաքը::

Rentrés en France, nous avons demandé à Monsieur Hovakimyan de répondre à quelques questions pour notre gazette.

***Ma-Sis* :** De quoi s'occupe actuellement votre service ?

Patvakan Hovakimyan : En ce moment, nous nous occupons de la défense juridique des prisonniers politiques. Nous avons environ 84 dossiers. Nous les instruisons en totalité quelque soit le volume de l'affaire à défendre. Avant les élections, nous n'étions que 10 employés. Après le 1er mars, nous avons intégré encore 25 avocats contractuels.

M-S. : Donnez-vous des services juridiques similaires aux autres partis politiques ?

P.H. : Nous apportons des services juridiques identiques à tout prisonnier politique indépendamment de son appartenance à un parti politique. Cela concerne également les personnes qui sont poursuivies et persécutées pour des motifs politiques sans avoir pour autant le statut de prisonnier politique.

M-S. : Quelles sont les réussites de vos prestations à cette date ?

P.H. : En ce moment, l'Arménie est un pays dictatorial et usurpé. En dépit de ce fait, nous avons réussi à obtenir trois acquittements, 20 changements de formes de détention. En ce qui concerne les autres condamnations illégales et commandées par le pouvoir en place, nous avons monté tous les dossiers et justifications juridiques pour plaider ces causes auprès de la Cour européenne.

M-S. : Quelles sont les difficultés que vous rencontrez ?

P.H. : Les difficultés majeures consistent dans le fait que les tribunaux et les représentants de la justice sont liés par des ordres politiques donnés par le pouvoir en place. Les procès sont très loin d'être indépendants, justes et sans parti pris. Ils sont également loin des lois de la République d'Arménie. Nous sommes contraints d'assurer la défense juridique des citoyens dans ces conditions.

նական ընտրական հանձնաժողովում՝ որպես իրավաբան: Այժմ աշխատում է Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակում, որտեղ ղեկավարում է իրավաբանական ծառայությունը:

Հանդիպման ընթացքում երկու մարդ ներկայացան իրենց բողոքներով: Առաջինը բողոքում էր, որ արդեն 45 օր է, ինչ չի կարողանում ետ ստանալ տուգանային հրապարակում գտնվող իր ավտոմեքենան, որը հայտնի իրադարձություններից առաջ կանգնեցված է եղել Օպերայի շրջակայքում: Երկրորդ տուժածը՝ մի տարեց կին էր, որը փողոցում ծեծվել էր ոստիկանության կողմից, երբ փորձ էր կատարել միջամտել մի ձերբակալության ժամանակ:

Erevan, début avril 2008. « Promenade politique » à l'avenue du Nord.
Երևան, 2008 թ., ապրիլ: «Քաղաքական զբոսանք» Հյուսիսային պողոտայում:

Վերադառնալով Ֆրանսիա մենք պ. Հովակիմյանին խնդրեցինք մեր թերթի համար պատասխանել մի քանի հարցերի:

«Մա-Սիս». - Ինչո՞վ է զբաղվում Ձեր ծառայությունը:

Պատվական Հովակիմյան. - Այս պահին զբաղվում ենք քաղբանտարկյալների իրավական պաշտպանության ապահովումով: Ունենք մոտ 84 գործ: Անկախ ծավալից, մենք դրանք ամբողջովին քննում ենք՝ նախապատրաստելով պաշտպանությունը: Մինչև ընտրությունները ունեինք ընդամենը 10 աշխատակից: Մարտի 1-ից հետո պայմանագրային հիմունքներով ներգրավվել են ևս 25 փաստաբաններ:

Մ-Ս. - Նման իրավաբանական ծառայություններ տրվո՞ւմ են, արդյոք, այլ քաղաքական կուսակցություններին:

Պ.Հ. - Նման կարգի իրավական ծառայություններ մատուցվում են ցանկացած քաղբանտարկյալի՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Նույնը վերաբերվում է նաև քաղաքական հայացքների համար հետապնդվողներին և հալածվողներին:

Մ-Ս. - Ի՞նչ հաջողությունների է հասել Ձեր ծառայությունը:

Պ.Հ. - Այս պահին Հայաստանը բռնապետական և բռնատիրական երկիր է: Այնուամենայնիվ, մեզ հաջողվել է հասնել 3 արդարացման դատավճռի, 20 խափանման միջոցի փոփոխության: Մնացած անօրինական և պատվերով վճիռների դեպքում ապահովել ենք բոլոր իրավաբանական հիմքերը՝ Եվրոդատարան դիմելու համար:

Մ-Ս. - Ինչպիսի՞ զարգացումներ են սպասվում:

Պ.Հ. - Հիմնական դժվարությունները կայանում են նրանում, որ դատարաններն ու օրինապահները կաշկանդված են իշխանությունների կողմից տրված քաղաքական պատվերներով: Դատավարությունները շատ հեռու են անկախ, արդար և անկողմնակալ լինելուց և Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներից: Եվ մենք ստիպված ենք քաղաքացու իրավական պաշտպանությունն իրականացնել այսպիսի դժվարին պայմաններում:

M-S. : De quoi avez-vous besoin ?

P.H. : Nous avons besoin d'appréciations objectives et indépendantes de la communauté internationale conforme aux normes internationales et sans application de « doubles standards » pour les procès politiques qui se déroulent dans la République d'Arménie.

M-S. : Quel avenir vous est réservé ?

P.H. : Nous sommes persuadés de notre victoire. Nous sommes convaincus que bientôt il n'y aura plus aucune personne condamnée, poursuivie et persécutée pour ses idées politiques. Quand ce temps arrivera, notre service se transformera en un cabinet ordinaire d'avocat.

M-S. : Les difficultés politiques ont-elles favorisé l'émigration ?

P.H. : Oui. Après le 1er mars, le flux migratoire a presque doublé.

M-S. : Coopérez-vous avec les avocats français d'origine arménienne ?

P.H. : Non, jusqu'à présent nous n'avons pas eu l'occasion de coopérer avec des services juridiques français.

Louisette Lamarche et Garik Galstyan

Մ-Ս. - Ինչի՞ կարիք ունեք:

Պ.Հ. - Հայաստանի Հանրապետությունում կատարվող քաղաքական գործառույթների անկախ, անաչառ և միջազգային նորմերին համապատասխանող, առանց երկակի ստանդարտների կիրառման, միջազգային հանրության օբյեկտիվ գնահատականին:

Մ-Ս. - Ինչպիսի՞ ապագա է Ձեզ սպասում:

Պ.Հ. - Համոզված ենք մեր հաղթանակի մեջ: Համոզված ենք, որ շուտով Հայաստանի Հանրապետությունում չեն լինի քաղաքական հայացքների համար դատապարտվողներ, հալածվողներ, հետապնդվողներ: Երբ այդ ժամանակը գա, մեր ծառայությունը կվերափոխվի սովորական փաստաբանական ծառայության:

Մ-Ս. - Քաղաքական դժվարությունները խթանե՞լ են, արդյոք, արտագաղթը:

Պ.Հ. - Այո՛, մարտի 1-ից հետո արտագաղթի տեմպերը գրեթե կրկնապատկվել են:

Մ-Ս. - Համագործակցո՞ւմ եք, արդյոք, ֆրանսահայ իրավաբանների հետ:

Պ.Հ. - Ո՛չ, մինչև հիմա առիթ չի եղել համագործակցել ֆրանսիական իրավաբանական ծառայությունների հետ:

Լուիզեթ Լամարշ և Գարիկ Գալստյան

PORTRAIT

ԴԻՄԱՆԿԱՐ

QUE LA FUMÉE DU FOYER PERDURE

Sa complicité avec la terre n'a pas une longue histoire. Étant loin de par sa profession du labourage, il a étrangement vite compris la langue de la terre et a assimilé facilement les secrets du jardinage. Cela vient sûrement de ses racines implantées à Van, dans les jardins de la ville où peut être on sent encore l'arôme délicat des pommes d'Artamet.

Aujourd'hui, Razmik Lmntsian est devenu jardinier par hasard. C'est une occupation qui convient bien aux personnes en retraite, une activité qui le ramène à ses racines.

« Pour comprendre la langue de la terre, il faut parfois redevenir un enfant pour s'émerveiller de chaque bourgeon qui fleurit et redevenir un adulte expérimenté pour se battre pour faire aboutir ces bourgeons. Tout ce que j'ai réussi est le fruit de cette bataille. Il est difficile d'obtenir de bons résultats sur cette terre argileuse ».

Razmik Lmntsian dans son jardin Ռազմիկ Լմնցյանն իր այգում

ՈՐ ՉՄԱՐԻ ՕՋԱԽԻ ԾՈՒԽԸ

Հողի հետ նրա մտերմությունը երկար տարիների պատմություն չունի: Մասնագիտությամբ հեռու լինելով հողագործությունից, նա զարմանալիորեն շատ արագ հասկացավ հողի լեզուն, դյուրությամբ յուրացրեց մշակագործության գաղտնիքները: Վըստահաբար, դա արմատներից է գալիս, իսկ արմատները «հողադրվել» էին Վանում, նրա այգեստաններում, ուր գուցե և մինչև օրս էլ բուրում է Արտամետի խնձորների անուշահոտ բույրը:

Sa complicité avec la terre n'a pas une longue histoire.
Հողի հետ նրա մտերմությունը երկար տարիների պատմություն չունի:

Այսօր Ռազմիկ Լմնցյանը հողագործ է դարձել ակամայից: Մի զբաղմունք, որ շատ հատկանշական է թոշակի տարիքն առած մարդկանց համար, մի զբաղմունք, որը կապում է իրեն իր իսկ արմատներին:

- Հողի լեզուն հասկանալու համար երբեմն մանուկ պիտի դառնաս, որ հրճվես ամեն մի ծաղկող բողբոջի համար, երբեմն հասուն մարդ, որն իր տարիների փորձով կռիվ տա հանուն այդ բողբոջի: Այսքանը, որին հասել եմ՝ կռվի շնորհիվ է, դժվար է կավային մեծ բաղադրությամբ այս հողի վրա արդյունքի հասնելը:

Յոթ տարի առաջ, երբ Հին Լիլի թաղապետարանը ընտանեկան այգիների տարածքում Ռազմիկ Լմնցյանին հողակտոր առաջարկեց, նա վայրկյան անգամ չտարակուսեց: Մտովի

Il y a sept ans quand la Mairie annexe du vieux Lille à proposé à Razmik Lmntsian cette parcelle de jardin familial, il n'a pris aucune seconde pour réfléchir. Par la pensée il s'est retrouvé en Arménie, dans sa maison sur les hauteurs de Nork, où ses parents avaient créé un magnifique jardin dans lequel, de retour fatigué du travail, il reprenait son souffle. Sous l'ombre des arbres on jouait entre amis aux cartes et au *nardis*. Au connu et à l'inconnu, on offrait les délicieux fruits du jardin.

Sur sa petite parcelle, Razmik a construit une cabane en bois. Il a ensuite enrichi la terre et y a planté de jeunes arbres. À la différence des parcelles voisines, son jardin rappelle une petite Arménie : ici pousse le mûrier, l'abricotier et le raisin importés de ce pays. Quand un ami arménien de Razmik lui a demandé avant de venir en France en touriste ce qu'il voulait du pays, il a répondu : « De jeunes arbres et des semences d'herbes et de légumes ». Au cœur de l'Europe il existe de nombreuses variétés de semences et d'arbres, mais pour construire son bout d'Arménie, il avait besoin de pousses de ce pays.



Il est fier de sa serre — Ջերմոցը նրա հպարտությունն է:

Peu de temps après sa prise de possession, son plaisir de jardiner a été gâché par l'incendie de sa cabane et de sa parcelle. Mais Razmik n'est pas du genre à baisser les bras, il a reconstruit une deuxième cabane, une des plus belles du secteur. Ses connaissances l'avaient baptisé de « château ». Il a ajouté une magnifique serre, s'est à nouveau procuré de jeunes arbres et à fait refleurir son jardin.

Mais le mauvais sort l'a encore frappé : son « château » et les arbres qui la bordaient ont encore été livrés au feu. Par miracle, le mûrier, l'abricotier et le figuier arméniens ont été sauvés. La magnifique pergola carbonisée a ensuite ressuscité les racines des vignes la composant donnant de nouvelles pousses. Le destin arménien…

Son jardin prospère à nouveau, sa troisième cabane est de nouveau debout. Il est curieux que les trois incendies n'aient pas atteint le barbecue en brique. C'est ainsi que la fumée du foyer perdure toujours.

Le mûrier, le figuier et l'abricotier importés de l'Arménie.
Հայաստանից բերված թթենին, թզենին ու ծիրանենին:

տեղափոխվեց Հայաստան, Նորքի բարձրադիր իր տունը, որտեղ ծնողները հրաշալի մի այգի էին ստեղծել, ուր աշխատանքից հոգնաբեկ վերադառնալուց հետո մի քիչ շունչ էր առնում, զովաշուք ծառերի ներքո թղթախաղ կամ նարդի էր խաղում ընկերների հետ, ծանոթ-անծանոթի հյուրասիրում պարտեզի անուշահամ մրգերով:

Փոքրիկ հողակտորի վրա Ռազմիկը փայտաշեն տնակ կառուցեց, ապա հողը պարարտացրեց, նրան հանձնեց առաջին տնկիները: Ի տարբերություն հարևան հողակտորների, նրա այգին փոքրիկ Հայաստան է հիշեցնում: Այստեղ աճում են Հայաստանից բերված թթենին ու ծիրանենին, հայկական խաղողը: Երբ Ռազմիկի հայաստանցի ընկերը Ֆրանսիա զբոսաշրջության գալուց առաջ հարցրել էր՝ ի՞նչ է ցանկանում երկրից, նա պատասխանել էր. տնկիներ, կանաչեղենի ու ընդեղենի սերմեր: Եվրոպայի սրտում այդ սերմերի ու տնկիների բազմապիսի տեսակներ կան, բայց իր փոքրիկ Հայաստանն ստեղծելու համար անհրաժեշտ էին հայկական հողի ծնունդ տնկիներ:

Հողագործի բերկրանքը նրան երկար չտրվեց: Կարճ ժամանակ անց հրի ճարակ դարձան և՛ փայտաշեն տնակը, և՛ այգին: Սակայն Ռազմիկը չընկրկեց, կառուցեց երկրորդ տնակը, որը շրջապատում լավագույններից էր, իսկ ծանոթները «դղյակ» էին անվանում: Կառուցեց նաև հրաշալի մի ջերմոց, կրկին տնկիներ հայթայթեց ու նորից ծաղկեցրեց այգին: Սակայն չարագործ ձեռքը վերստին գործեց, հարևան տնակների հետ հրդեհի մատնվեցին նաև նրա «դղյակը», ծառ ու թուփը: Բայց հրաշքով փրկվեցին հայկական թթենին, ծիրանենին ու թզենին, իսկ փայտածուխի վերածված խաղողի հիասքանչ թարման հետագայում ասես հարություն առավ ու արմատներից նոր շիվեր արձակեց: Հայի ճակատագիր...

Հիմա նրա այգին նորից ծաղկունքի մեջ է, երրորդ տնակն էլ արդեն կանգուն է: Ուշագրավ է, որ երեք հրդեհներն էլ չկարողացան վնասել միայն աղյուսաշեն խորովածանոցը, և այսպես օջախի ծուխը երբեք չմարեց:

Les trois incendies n'ont pas atteint le barbecue en brique. C'est ainsi que la fumée du foyer perdure toujours.
Երեք հրդեհներն էլ չկարողացան վնասել միայն աղյուսաշեն խորովածանոցը:
Եվ այսպես օջախի ծուխը երբեք չմարեց:

Chaque matin très tôt, Razmik va à la rencontre de ses plantes. Comme un architecte expérimenté, il a créé le plan original de son jardin. Près de la cabane se trouve la véranda, proche de la serre, puis on trouve les sillions d'herbes et de légumes, et de l'autre côté sont plantés des arbres. Les roses de couleurs vives bordent le jardin.

Les mains du laboureur qui travaillent chaque arpent de terre, enrichi avec beaucoup de soins, arrosé d'eau de pluie, se sont endurcies. Son cœur se serre lorsqu'il ne pleut pas. Très souvent sa fidèle compagne, Madame Jacqueline, l'accompagne. Elle avoue que l'occupation la plus agréable est la récolte. Ils partagent généreusement les produits de ce jardin avec leurs amis.

Très souvent sa fidèle compagne, Madame Jacqueline, l'accompagne.
Նրա հավատարիմ կողակիցը՝ տիկին Ժաքլինը, հաճախ նրա կողքին է:

Actuellement, le jardin de Razmik a toutes les nuances de vert. Les jours d'été, les passants sentent les doux effluves du foyer du barbecue. Sa fille Anna avec sa famille, son fils Garik et son bien-aimé petit fils Arthur lui rendent souvent visite en ce lieu. Jusque tard le soir, durent les conversations amusées et les bons repas. La fumée du foyer continue de se diffuser avec ses arômes. Qu'elle ne s'arrête jamais.

Jacqueline Kasparian

Une petite histoire

Les jardins ouvriers ou familiaux ont été créés par l'abbé Lemire dans le Nord en 1896 pour lutter contre la pauvreté des familles ouvrières de l'époque et leur proposer un loisir sain et familial. Cet abbé a créé la « Ligue du coin de terre et du foyer », première véritable organisation de ce type de jardins en France. Dès 1897, voit le jour un journal de jardinage qui existe encore aujourd'hui sous le titre de *Jardin familial de France*. Jusqu'à la fin de la Deuxième guerre mondiale, ces jardins ont connu un fort développement partout en France. Il en existait alors 700 000. Puis, avec le confort et le développement économique des trente glorieuses, ces jardins ont connu une période de désaffection. C'est dans les années 1980 que l'engouement pour ces jardins est revenu en force.

Les jardins familiaux sont des lotissements de parcelles gérés par une association, mis à disposition de jardiniers afin qu'ils en jouissent pour leurs loisirs et les cultivent pour les besoins de leur famille, à l'exclusion de tout usage commercial. De nombreuses associations existent dans pratiquement toutes les villes. L'*Association nationale des Jardiniers de France* qui fédère ces associations locales a son siège à Valenciennes, 40, Route d'Aulnoy. En France, on recense aujourd'hui environ 150 000 parcelles de jardins familiaux. 120 000 d'entre elles sont gérées par 800 associations rattachées à la Fédération.

Cette fédération organise des ateliers à thème (la greffe des arbres, le compostage, les traitements bio, reconnaître les insectes utiles et nuisibles du jardin) dans de nombreuses villes où les interventions sont faites par des jardiniers expérimentés et bénévoles.

Ամեն օր վաղ առավոտյան Ռազմիկը գնում է հանդիպման իր ծառ ու ծաղկի հետ: Հմուտ ճարտարապետի նման նա կերտել է իր պարտեզի յուրօրինակ հատակագիծը: Տնակին կից բացօթյա ծածկապատշգամբն է, մի կողմում ջերմոցն ու կանաչեղենի ու բանջարեղենի մարզերն են, մյուս կողմում՝ ծառերը, իսկ այգին ցանկապատում են վառվռուն վարդերը:

Կոշտացել են արդեն մշակի ձեռքերը, որոնցով մշակում է հողի յուրաքանչյուր թիզը, խնամքով պարարտացնում, անձրևաջրերով ոռոգում, սրտնեղում, երբ եղանակը չորային է ու անձրև չկա: Նրան հաճախ ընկերանում է նաև տարիների իր հավատարիմ կողակիցը՝ տիկին Ժաքլինը, որի խոստովանությամբ ամենահաճելի զբաղմունքը բերքահավաքն է: Ու այդ փոքրիկ այգու բարիքներից նա առատորեն բաժին է հանում ծանոթ-բարեկամներին:

Հիմա Ռազմիկի այգին կանաչի բոլոր երանգներով հանդերձանքի մեջ է: Ամառվա օրերին անցորդը հաճախ կըմբոշխնի նրա օջախից տարածվող խորոված անուշ բույրը: Այստեղ իրենց հաճելի ժամանցն են վայելում Աննա դուստր ընտանիքը, Գարիկ որդին և շատ սիրելի թոռնիկը՝ Արթուրը: Մինչև ուշ երեկո ծայր են առնում ուրախ զրույցներն ու համեղ ընթրիքը, իսկ օջախի ծուխը դեռ ծխում է խորոված անուշահոտը: Թող չմարի երբեք այդ ծուխը...

Ժաքլին Կասպարյան

Les roses de couleurs vives bordent le jardin.
Այգին ցանկապատում են վառվռուն վարդերը:

Մի փոքրիկ պատմություն

Բանվորական կամ ընտանեկան այգիները ստեղծվել են 1896 թ. Նորդի շրջանում աբբատ Լեմիրի կողմից: Հետապնդվող նպատակն է եղել պայքարել բանվորական ընտանիքների այն ժամանակվա աղքատության դեմ՝ առաջարկելով նաև առողջ ընտանեկան ժամանցի ձև: Այս աբբատը հիմնադրում է «Ընտանեկան այգիների լիգա»ն, այս տիպի առաջին լիիրավ կազմակերպությունը Ֆրանսիայում: 1897 թ. սկսում է լույս տեսնել «Ֆրանսիայի ընտանեկան այգիները» այգեգործական պարբերականը, որը պահպանվել է մինչև մեր օրերը: Ամենուրեք Ֆրանսիայում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջը այս տիպի հողամասերը լայն տարածում են ունեցել՝ անցնելով 700 000 սահմանը: Հետագայում կյանքի պայմանների բարելավմանը և հետպատերազմյան 30 տարիների տնտեսական բուռն զարգացմանը զուգահեռ նրանց նկատմամբ ուշադրությունը հետզհետե թուլացավ: Սակայն 1980-ական թվականներից սկսած հետաքրքրությունն այս տիպի հողամասերի նկատմամբ կտրուկ բարձրացավ:

Ընտանեկան այգիներն իրենցից ներկայացնում են հողաբաժիններ, որոնց կառավարումը իրականացնում է հողագործների կողմից ընտրված ընկերակցությունը: Վերջինս հետևում է հողամասերի նպատակային օգտագործմանը՝ մարդկանց ժամանցի և ընտանիքի կարիքները հոգալու համար: Ամեն տեսակի առև-

En moyenne les parcelles des jardins familiaux sont de 250 m2. Les abris sont très divers et portent différents noms : cabanes, tonnelles, gloriettes, pavillons de verdure. Constitués dans les premiers temps de matériaux de récupération, ils ont souvent amené les détracteurs des jardins à comparer ceux-ci à des bidonvilles.

Les situations sont à l'heure actuelle très variées. Certains jardins laissent les bénéficiaires libres de leur installation. D'autres encadrent leur aménagement de façon plus ou moins sévère : alignement des cabanes et des parcelles, matériaux unifiés etc.

L'aménagement des jardins a suscité dernièrement l'intérêt des écoles et des professionnels du paysage et de l'architecture comme en témoignent les abris de Renzo Piano des jardins de Villejuif (94) ou la « Colonie de papillons » des jardins de Bron (69).

Pour connaître les jardins existants près de chez vous, il faut s'adresser à la Mairie de votre ville. Les parcelles sont louées par les particuliers aux associations pour un prix très modique. Mais attention la liste d'attente peut être longue, jusqu'à 2 à 3 ans. Dans le quartier du Faubourg de Béthune une association ex-ploite le jardin des *Coccinelles* 14 impasse Blériot.

Louisette Lamarche

LES TRACES ARMÉNIENNES DANS LE NORD

SARKIS DIRANIAN (1854 ?-1918)

L'année dernière, en visitant le musée de La Piscine de la ville de Roubaix, nous avons été agréablement surpris de découvrir quelques tableaux de peintres d'origine arménienne. Ce fait nous a amené à la rencontre avec Amandine Delcourt, l'aimable documentaliste du musée, pour connaître l'histoire de ces tableaux et savoir comment ils sont arrivés à Roubaix. Nous allons évoquer aujourd'hui le tableau du peintre armé-nien Sarkis Diranian de Constantinople.



Sarkis Diranian (1854 ?-1918)

Սարգիս Դիրանյան (1854 ?-1918)

En 1924, Pierre Henri Selosse, riche négociant en textile roubaisien (laine) décide de léguer à la ville de Roubaix toutes ses collections. Un testament est rédigé à cette occasion. Par ce document, il lègue à l'État, à condition qu'il en soit fait dépôt au musée de Roubaix ses objets d'art, bijoux, meubles et sa collection de tableaux. Quant à la bibliothèque, elle a été vendue publiquement faute de legs.

տրական գործունեություն արգելված է: Համարյա բոլոր քաղաքներում գործում են նմանատիպ ընկերակցություններ, որոնք միավորված են Այգեգործների Ֆրանսիայի ազգային միության մեջ, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Վալանսիեն քաղաքում (40, Route d'Aulnoy): Այսօր Ֆրանսիայում հաշվվում է մոտ 150 հազար ընտանեկան հողամասեր, որոնցից 120 հազարը ղեկավարվում են 800 ընկերակցությունների կողմից, որոնք միավորված են մի Ֆեդերացիայի մեջ:

Շատ քաղաքներում Ֆեդերացիան կազմակերպում է փորձի փոխանակման թեմատիկ դասընթացներ՝ ծառերի պատվաստում, հողերի պարարտացում, բիոմշակում, օգտակար և վնասատու միջատների տարբերակում և այլն: Դասընթացները վարում են փորձված այգեգործները հասարակական հիմունքների հիման վրա:

Հողամասերի միջին չափը 250 քառ. մետր է: Նրանց վրա գտնվող տնային շինությունները շատ բազմազան են և ունեն տարբեր անվանումներ: Սկզբնական շրջանում նրանք կառուցվում էին նախկինում արդեն օգտագործված շինմատերիալներով, որը հիմք էր տալիս «չար լեզուներին» նրանց համեմատել բարաքների հետ:

Այսօր դրությունն այլ է: Որոշ ընկերակցություններ թույլատրում են իրենց օգտառուներին կառուցել ցանկացած տիպի շինություններ: Մյուսները քիչ թե շատ խստությամբ են մոտենում այս հարցին՝ հողամասերի և շինությունների համակարգում, միանման շինմատերիալների օգտագործում և այլն:

Ընտանեկան այգիների կարգավորումը վերջին ժամանակներս իր վրա է սևեռել դպրոցների և պրոֆեսիոնալ բնահարդարների ու ճարտարագետների ուշադրությունը: Դրա վառ վկայությունն են Վիլժուիֆ քաղաքի (94) Ռենցո Պիանո այգետնակները կամ Բրոնի (69) «Թիթեռների գաղութը» ընտանեկան այգիները:

Ձեր մոտակայքում գտնվող ընտանեկան հողամասերի մասին տեղեկություններ ստանալու համար հարկավոր է դիմել քաղաքապետարան: Մասնավոր անձինք շատ ցածր գներով ընկերակցություններից կարող են վարձակալել հողաբաժիններ: Բայց եղե՛ք ուշադիր, հերթացուցակը կարող է շատ երկար լինել՝ մինչև 2-3 տարի: Ֆոբուր դը Բեթյուն թաղամասում կա գործող «Զատիկներ» (Coccinelles) այգիների ընկերակցությունը, որը գտնվում է հետևյալ հասցեում՝ 14, Impasse Blériot:

Լուիզեթ Լամարշ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐ՝ ՆՈՐԴՈՒՄ

ՍԱՐԳԻՍ ԴԻՐԱՆՅԱՆ (1854 ?-1918)

Անցյալ տարի այցելելով Ռուբե քաղաքի La Piscine (Լողավազան) թանգարանը մենք հաճելի անակնկալի եկանք, երբ ցուցադրվող գործերի մեջ հանդիպեցինք ծագումով հայ մի քանի նկարիչների ստեղծագործություններ: Այս առիթով մենք հանդիպում ունեցանք թանգարանի սիրալիր փաստավավերագիր Ամանդին Դելքուրի հետ: Մեր նպատակն էր ծանոթանալ այդ նկարների պատմության և Ռուբեում հանգրվանելու մասին: Այսօր մենք կանդրադառնանք պոլսահայ նկարիչ Սարգիս Դիրանյանի կտավին:

1924 թ. Պիեռ Հենրի Սելոսը՝ տեքստիլի (բուրդ) բնազավառի ռուբեզացի հարուստ մի վաճառական, որոշում է իր բոլոր հավաքածուները կտակել Ռուբե քաղաքին: Կտակի համաձայն նրան պատկանող արվեստի գործերը, զարդեղենները և նկարների հավաքածուն հանձնվում են պետությանը՝ պայմանով, որ այս ամենը տրամադրվի Ռուբեի թանգարանին: Ինչ վերաբերում է գրադարանին, այն հանվեց վաճառքի, քանի որ կտակում այդ մասին ոչինչ հիշատակված չէր:

Կտակված ստեղծագործությունների շարքում գտնվում

Parmi les œuvres léguées se trouvaient trois toiles orientalistes : *Esclave à vendre* (1873) de Jean-Léon Gérôme, *Princesse de Bengale* (1899) d'Edwin Weeks et *Scène de hammam* (1896) de Sarkis Diranian. Les tableaux sont exposés dans une salle entièrement consacrée à l'orientalisme.

Diranian illustre un Orient romanesque pour amateur occidental en représentant une scène de hammam. Plusieurs groupes de femmes nues discutent ou se reposent dans ce lieu de détente délicatement décoré de faïences bleues et de tapis orientaux. Au premier plan on devine un bassin.

Diranian est né à Constantinople dans les années 1850. Il a étudié à l'école privée de dessin et de peinture, fondée et dirigée depuis 1875 par l'artiste français Pierre Désiré Guillemet[1], dans le quartier de Beyoghlou (Pera)[2]. On le remarque pour ses portraits ainsi que pour des scènes de genre dans un esprit orientaliste où il met en scène le petit peuple.

Son tableau l'*Enchanteresse* a été exposé dans le studio des photographes Adullah frères à Beyoghlou en 1883. La vente de la toile lui a permis de se rendre à Paris pour étudier auprès de Jean-Léon Gérôme[3]. En 1883 ou 1884, alors qu'il était toujours à Paris, il a reçu l'ordre du Medjidiye[4] de l'empire ottoman.

À partir de 1887, Sarkis Diranian reçoit une bourse mensuelle du ministère ottoman de l'éducation. En 1889, il est diplômé de l'Académie des Beaux-Arts de Paris et participe jusqu'en 1910 aux expositions organisées par la *Société des artistes français* à Paris. Le peintre reçoit une mention honorable à l'Exposition Universelle de 1900. Une exposition

[1] Peintre d'histoire français d'origine lyonnaise (1827-1878).

[2] Quartier de Constantinople situé sur la côte occidentale du Bosphore, aussi connu aujourd'hui sous le nom de Taksim.

[3] Peintre et sculpteur français (1824-1904), membre de l'Institut (Académie des Beaux-Arts). Emblématique de la peinture académique du Second Empire, Gérôme est parfois qualifié de peintre pompier. Il représenta souvent des scènes orientales ainsi que des thèmes chers aux néoclassiques.

[4] Fondé en 1852 par le sultan Abdul Medjid pour récompenser les services civils et militaires des nationaux et des étrangers, cet Ordre comprend cinq classes.

էին երեք արևելյան կտավներ՝ Ժան-Լեոն Ժերոմի «Վաճառվող ստրուկը», Էդվին Ուիքսի «Բենգալիայի արքայադուստրը» և Սարգիս Դիրանյանի «Թուրքական բաղնիք»ը: Սրահը, որտեղ ցուցադրվում են հիմա այս նկարները, ամբողջությամբ նվիրված է Արևելքին:

Արևմտյան արվեստասերների համար Դիրանյանը պատկերում է մի էպիկական Արևելք՝ ի դեմս թուրքական բաղնիքի տեսարանի: Մերկ կանանց մի քանի խմբեր զրուցում են կամ էլ հանգստանում այս լողասրահում՝ նրբորեն հարդարված կապույտ խեցեղենից պատրաստված սալիկներով և արևելյան գորգերով: Առաջին պլանում կարելի է տեսնել լողավազանը:

Դիրանյանը ծնվել է Կ.Պոլսում 1850-ական թվականներին: Սովորել է Բեյողլու (Պերա)[5] թաղամասի նկարչության մասնավոր դպրոցում, որը հիմնել և 1875 թ. ղեկավարում էր ֆրանսիացի արվեստագետ Պիեռ Դեզիրե Գիյեմեն[6]: Նա աչքի է ընկնում իր դիմանկարներով, ինչպես նաև արևելյան ոգով արտահայտում հասարակ ժողովրդի առօրյա տեսարաններ:



1883 թ. Բեյողլու թաղամասում նրա «Գայթակղող կինը» կտավը ներկայացվում է Աբդուլլա եղբայրների լուսանկարիչների ստուդիայում: Կտավի վաճառքից ստացված գումարը նրան հնարավորություն է տալիս գնալ Փարիզ և սովորել Ժան-Լեոն Ժերոմի[7] մոտ: 1883 կամ 1884 թ., դեռ Փարիզում գտնվելու ժամանակ, նա ստանում է Օսմանյան կայսրության Մեջիդիեի շքանշանը[8]:

1887 թ. սկսած Սարգիս Դիրանյանին տրվում է օսմանյան կրթության նախարարության կրթաթոշակը: 1889 թ-ին նա դառնում է Փարիզի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ և մինչև 1910 թ. մասնակցում է Ֆրանսիացի արվեստագետների միության Փարիզում կազմակերպած ցուցահանդեսներին: 1910 թ. Համաշխարհային ցուցահանդեսում նա արժանանում է պատվոգրի: 1908 թ. Փարիզում բացվում է գեղանկարչի անհատական ցուցահանդեսը: 1909 թ. մի շարք արվեստագետների հետ նրա աշխատանքները ցուցադրվում են Մյունխենում:

Նկարչի նշանակալից գործերի շարքում տեղ են գտնում իր բարեկամ, այն ժամանակ Փարիզում ապրող բժիշկ Նակաշյանի գեղեցիկ դիմանկարը, «Վարդ քաղող երիտասարդ կինը» (1897), «Պարողը» և «Թեյ ըմպելու ժամը», որը ցուցադրվեց Փարիզում 1910 թ., ինչպես նաև «Վեգ խաղացող երեխան», որն այսօր գտնվում է Անկարայի նախագահական նստավայրում:

Մի վարանեք գնալ տեսնել այս կտավը Ֆրանսիայի թանգարաններից մեկում, որի բացառիկությունը գործածության արժևորման և սկզբնական տեսքի պահպանման մեջ է: Այս շինությունը Նորդի շրջանի առաջին լողավազաններից մեկն էր՝ բացված 1932 թ.: Այսպիսով արվեստը և հայրենի պատմությունը սերտորեն և իրավացիորեն միախառնված են:

Ֆրանսիայի շատ թանգարանների նման La Piscine-ի մուտքն անվճար է ամեն ամսվա առաջին կիրակի օրը: Մյուս օրերի մուտքի արժեքն է 3,50 եվրո: Հասցեն՝ 24 Rue des Champs, 59100, Roubaix, հեռ՝ 0320692373, www.roubaix-lapiscine.com.

[5] Կ.Պոլիսի Բոսֆորի արևմտյան ափին գտնվող թաղամասերից մեկը, որն այսօր հայտնի է նաև Տաքսիմ անունով:

[6] Ֆրանսիացի՝ ծագումով Լիոնից, պատմական նկարիչ (1827-1878).

[7] Ֆրանսիացի նկարիչ և քանդակագործ (1824-1904), գեղարվեստի ակադեմիայի անդամ: Երկրորդ կայսրության ակադեմիական նկարչության խորհրդանշական ներկայացուցիչ Ժերոմին հաճախ անվանում են «պերճանկարիչ»: Նա հաճախ էր պատկերում արևելյան տեսարաններ, ինչպես նաև նեոկլասիցիզմին հոգեհարազատ թեմաներ:

[8] 1852 թ. Աբդուլ Մեջիդի կողմից հիմնադրած շքանշան՝ իբրև հատուցում քաղաքացիական և ռազմական մատուցած ծառայությունների համար անկախ ազգային պատկանելությունից: Այն ունի հինգ աստիճան:

personnelle lui est consacrée en 1908 à Paris. En 1909 il sera exposé avec d'autres artistes à Munich.

Parmi ses œuvres importantes, on trouve le beau portrait de son ami le docteur Nakachian, qui se trouvait en même temps que lui à Paris, *Jeune femme cueillant une rose* (1897), *Le Danseur* et *L'heure du thé* exposés à Paris en 1910, de même que des *Enfants jouant aux osselets* qui se trouve aujourd'hui à la résidence présidentielle d'Ankara.

N'hésitez pas à aller voir cette toile dans le musée de La Piscine, exceptionnel en France de part la mise en valeur de son usage et la préservation de son aspect précédent : une des premières piscines ouvertes dans la région en 1932. Histoire locale et art sont ainsi étroitement et justement mêlés.

Le musée de La Piscine, comme beaucoup d'autres en France, ouvre gratuitement ses portes tous les premiers dimanches de chaque mois. En dehors de cette date, le tarif plein d'entrée est de 3,50 euros. Adresse : 24 Rue des Champs, 59100, Roubaix, tel. : 0320692373, www.roubaix-lapiscine.com

Ouvert tous les jours, sauf lundi, du mardi au jeudi 11h-18h, vendredi 11h-20h. Samedi et dimanche 13h-18h.

Garik Galstyan
avec l'aide de Varvara Basmadjian

Բաց է ամեն օր՝ բացի երկուշաբթի օրերից: Երեքշաբթիից մինչև հինգշաբթի՝ 11.00-18.00, ուրբաթ օրը՝ 11.00-20.00, շաբաթ և կիրակի՝ 13.00-18.00:

Գարիկ Գալստյան՝
Վարվարա Բասմաջյանի օգնությամբ

Remerciements

Madame Sona Karapetian tient à remercier les personnes qui lui ont fait un don pour le décès de son mari Monsieur Gevorg Badalyan. Hayk et Siranouche ont pu ainsi notamment l'aider à organiser une messe et à louer une salle pour recevoir sa famille et ses amis autour d'une table selon la coutume arménienne.

Շնորհակալություն

Տիկին Սոնա Կարապետյանը շնորհակալություն է հայտնում ամուսնու՝ պ. Գևորգ Բադալյանի մահվան կապակցությամբ իրեն օգնություն ցուցաբերած բոլոր մարդկանց: Հայկը և Սիրանուշը մասնավորապես օժանդակեցին վերջին օծման արարողության կազմակերպման և սրահի վարձակալման հարցում, որը հնարավորություն տվեց նրա ընտանիքի անդամներին և ընկերներին հավաքվել ընդհանուր սեղանի շուրջ, ինչպես պահանջում է հայկական ավանդույթը:

Cuisine

POTAGE AUX LENTILLES CORAIL
de Louisette

Ingrédients

200 gr de lentilles corail (rouges)
1,5 litre de bouillon maison ou en tablettes
50 gr de beurre
2 jaunes d'œuf
30 cl de lait
1 oignon
Poivre noire moulu
Sel

Préparation :

. Pelez et coupez l'oignon en petits dés et faites le dorer avec le beurre pendant environ 5 minutes à feu doux.
. Lavez les lentilles, égouttez-les, puis ajoutez-les à l'oignon avant de verser le bouillon. Salez et poivrez.
. Laissez cuire 20-25 minutes à feu moyen jusqu'à ce que les lentilles soient bien tendres.
. Passer cette soupe encore chaude au moulin à légumes.
. À part, battez les œufs avec le lait et versez cette préparation sur le potage.
. Mélangez et faites réchauffer le potage quelques minutes à feu doux avant de le servir bien chaud.

Bon appétit !

Խոհանոց

ԿԱՐՄԻՐ ՈՍՊՈՎ ՍՈՒՊ՝
Լուիզեթից

Բաղադրամասեր

200 գրամ կարմիր ոսպ
1, 5 լիտր տնային պատրաստության արգանակ կամ արգանակի խորանարդիկ
Կարագ 50 գր
2 ձվի դեղնուց
300 միլիլիտր կաթ
1 սոխ
Աղացած սև պղպեղ
Աղ

Պատրաստման եղանակը

. Սոխը մաքրել, կտրտել փոքրիկ խորանարդիկներով և դանդաղ կրակի վրա 5 րոպե տապակել կարագով:
. Ոսպը լվանալ, քամել, ավելացնել սոխի վրա և հետո լցնել արգանակը: Ցանել աղ ու սև պղպեղ:
. Եփել 20-25 րոպե միջին կրակի վրա մինչև ոսպը լավ փափկի:
. Դեռ տաք վիճակում ապուրը լցնել բանջարեղենի աղացի մեջ և աղալ:
. Առանձին 2 ձվի դեղնուցը կաթի հետ հարել և ստացված մասսան ավելացնել ապուրին:
. Խառնել և մարմանդ կրակի վրա մի քանի րոպե տաքացնել ապուրը: Մատուցել տաք վիճակում:

Բարի ախորժակ:

Le 4 octobre 2008, à 14 heures, reprise des cours de langue arménienne pour les enfants.

Հոկտեմբերի 4-ին՝ ժամը 14-ին, կվերսկսվեն երեխաների համար հայերենի դասընթացները:

Le 4 octobre 2008, de 12h30 à 14 heures, au Centre social du Faubourg de Béthune à Lille : Assemblée générale de l'association *Ararat*. 43 familles composent actuellement l'association, nous espérons avoir la participation d'un maximum d'entre vous pour dépasser ce chiffre, partager avec vous le bilan de l'année qui vient de se passer et évoquer les projets de l'année prochaine.

Հոկտեմբերի 4-ին՝ ժամը 12.30-ից մինչև 14-ը, Ֆոբուր դը Բեթյունի Մշակույթի տանը տեղի կունենա «Արարատ» միության ընդհանուր ժողովը: Ներկայումս միությունն ունի 43 անդամագրված ընտանիք: Հուսով ենք, որ Ձեր ակտիվ մասնակցությամբ այս ցուցանիշը կավելանա, և մենք կարծիքներ կփոխանակենք մեր անցյալ տարվա իրականացված գործերի և հաջորդ տարվա անելիքների մասին:

Le 10 octobre 2008 : dans le cadre des sélections pour le championnat du monde, rencontre de football Belgique – Arménie à Bruxelles. Prix des places : 16 euros. Contactez Karen Zakarian pour plus de renseignements : 03 20 95 20 75 ou 06.10.83.62.80.

Հոկտեմբերի 10-ին, Աշխարհի առաջնության նախընտրական փուլում Բրյուսելում կկայանա Բելգիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումը : Տոմսի արժեքն է 16 եվրո: Մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել Կարեն Զաքարյանին՝ 03.20.95.20.75 կամ 06.10.83.62.80:

Dimanche, le 12 octobre 2008 : à 11h30, au théâtre de Rianderie de Marcq en Baroeul, aura lieu le concert de JAZZ *doudouk* d'Arayik Bartikian. Entrée gratuite.

Հոկտեմբերի 12-ին՝ կիրակի օրը, ժամը 11.30, Մարք ան Բարոլ քաղաքի «Rianderie» թատրոնում տեղի կունենա Արայիկ Բարտիկյանի դուդուկի համերգը: Մուտքն ազատ է:

Le mardi 9 décembre 2008, de 15h00 à 17h00 : conférence sur l'Arménie « Découverte du pays à travers les steppes du Petit Caucase » par Jérémie Liagre, conférencière en archéologie. Organisation : Tourcoing Loisirs Séniors. Lieux : Maison des Associations, salle Georges DAEL, 100 rue de Lille à Tourcoing ; Prix : 4 euros.

Դեկտեմբերի 9-ին՝ ժամը 15-ից 17-ը, տեղի կունենա հնագետ Ժերեմի Լիագրի Հայաստանին նվիրված բանախոսությունը «Մի երկրի բացահայտում՝ Փոքր Կովկասի տափաստաններով անցնելիս» խորագրի ներքո : Կազմակերպիչ՝ Tourcoing Loisirs Séniors: Հասցեն՝ ք. Թուրքուեն, Լիլի փողոց 100, Միությունների տուն, Ժորժ Դաելի դահլիճ: Մուտքը՝ 4 եվրո:

ASSOCIATION ARARAT
65 Rue Saint Bernard
59000, Lille

BULLETIN D'ADHESION

Nom ________________________________ Prénom ________________________________

Adresse ____

Mail ________________________________ Téléphone ______________________________

Adhère à l'association ARARAT pour l'année 2008/2009

a payé une adhésion de 15 euros

On n'aura plus d'abonnement pour la gazette *Ma-Sis*. Les numéros seront vendus à l'unité après chaque parution. Vous en serez inforlmés par le biais de la poste électronique.

Այս համարից սկսած մենք դադարում ենք «Մա-Սիս» թերթի հերթագրումը: Յուրաքանչյուր նոր համար կվաճառվի հրատարակվելուց անմիջապես հետո, որի մասին Ձեզ տեղյակ կպահենք էլեկտրոնային փոստի միջոցով:

Pour tout cela et pour toute autre remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@voila.fr
Par courrier : 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Par téléphone : 03.20.05.42.25 ou 03.20.57.45.06

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@voila.fr
Փոստային հասցե՝ 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Հեռախոսներ՝ 03.20.05.42.25 կամ 03.20.57.45.06

Responsable de publication en français : Louisette Lamarche et Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan, Haïk Gambarian, Jacqueline Kasparian
Traduction : Garik Galstyan et Haïk Gambarian

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատու՝ Լուիզեթ Լամարշ և Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատուներ՝ Գարիկ Գալստյան, Հայկ Ղամբարյան, Ժաքլին Կասպարյան
Թարգմանությունը՝ Գարիկ Գալստյանի և Հայկ Ղամբարյանի

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում: